

Պ Ա Յ Մ Ա Ն Գ

Էրիզան 10 օրը անգամ մը կը
հրատարակուի :
Տարեկան գինն է 1 1/2 մեհրո
Մէկ թերթը 40 փարայ .
Բաժանորդագրութիւնը տար-
ւոյն սկիզբէն է .
Դուրս երթալիքներուն ճամբու
ծախքը առնուլին վրայ է :
Անվճար նամակը կը մերժուի .
Հանդիսիս վերաբերեալ նա-
մակ կամ գրուածին, պէտք է
ուղղել առ Խմբագիր :



ԿՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

Կ. Պօլիս Արամեան տպարան .
Ատաբաղար, Պ. Սայաճորեան .
Սամսոն Օհանէսէս Եղիսէրեան .
Տրապիզոն, Հ. Բ. Սարգեան .
Էրիզա Պ. Սիման Մ. Խաչու-
տուրեան .
Նիկովիզա, Ռուբէն Կ. Դա-
պատազարեան .
Զմիւռնիա, Պ. Գէորգ Պուպի .
Կարին, Կ Պատ. Զաքարեան .
Վան, Պ. Գրիգոր Իսաճեան .
Մուշ, Աւետիս Փոթիկեան .

Է Ր Ի Զ Ա

Հ Ա Ն Դ Է Ս Տ Ա Ս Ն Օ Ր Ե Ա Յ

Ա. Տարի 1868

Երեկ կ'ուզես գիտնալ քե աշխարհիս ազգաց մեջեմ հոն ե աւենեմ յու-
սաւորեալն ու հարուստը . հարցուր քե հր ազգն աւելի ընթերցասէր ե
կամ հր ազգն աւելի քուդր կը գործածէ :

Թիւ 11 Մայիս 1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամսադին կամ Տիրապանութիւն . — Անձնութեան գո-
հողութիւն . — Սամաքիոյ Թաղական Խորհրդէն նամակ մը .

ԱՄՆԱԴԻՆ

Կ Ա Մ

Տ Ի Ր Ա Ս Պ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Բ .

Աշոտ այն ատեն սկսաւ պատմել :

— Երբ 1438 Թուականին Հայաստանի ամէն
կողմէն անազորոյն ոսոխներ շրջապատած նաև
իւր գոյութիւնը վտանգի մէջ էր , յանկարծ օր մը
անոր քաղցր ակնկալութիւնը նորոգեցաւ և այս դը-
ժընեայ ժամանակի մէջ անոր սիրտը մխիթարու-

ծիւն զգեցաւ , ինչպէս զիշեր ատեն , ընդարձակ
դաշտի կամ անապատի մէջ ակնկոր ուղևոր մը հե-
ռուն փալկիւնն ճրագի մը նշոյլը տեսած ատեն օ-
ժեան մը գտնելու և հանգիստ ընելու յոյսով ոգի
կառնէ և կը խրախուսի :

Հայաստանի տխուր հորիզոնին վրայ մարած
աստղերու տեղ նոր աստղ մը փայլելու կսկսէր :
Սմբատ Ուռպելեանց բազմահանճար ու վեհագն որ-
դի Պելքինէ իմ գտնուած Կապան երկրին կը տիրէր
և իւր իշխանութեանը տակ զըտնուող վաճառուն հա-
զարէ աւելի Հայերը արտաքին յարձակումներու
դէմ պաշտպանելով՝ Հայրական գորովալից սիրով
կը խնամէր զանոնք , այնպէս որ հոն տեղի բերրի
և արդիւնաւոր բնութեան հետ , Հայերու հայրենա-
սիրութիւնը , Իշխանին բարեկարգութիւնները ,
արդարութիւնը և նոյն իսկ նոր ծաղկելու սկսող
արհեստները զոգցեն իրար զերգանցել և յաղմա-
նակ կանգնել կ'երագէին :

Այս պտենները մեր հայրենեաց այդ մասին հա-

մար գրեթէ ոսկեղար մ'նէին և Հայաստանի միւս գաւառներէն անծիւ բազմութիւն կ'ուզար Կապանի բնակչաց բարօրութեանը մասնակից ըլլալու : Արդարեւ վսեմ և նախանձելի վիճակ :

Այս միջոցին Պելզինէ իւր մտերիմներէն Ամնադին անուն մէկը իրեն խորհրդական անուանեց :

Ամնադին ուշիմ, հանճարեղ, այլ խիստ շահամուլ էր : Իւր ոսկետէնչ փափաքը բան մը չէր կարող յազեցնել և ստէպ փոքր վաստակի մը համար իւր կեանքը անգամ պատրաստ էր զոհելու : Վասն որոյ իւր սիրտն ալ ըստ պարագային միտումներ ունէր դէպ ի չարիք : Իր նպատակը՝ անյապաղ ի գործ դնելու ատեն վայրագ հրեշ մը կը դառնար Յարզը, պատիւը, երևելիներու քով ունեցած համարումը մի' միայն հեշտալից մոլորութիւնները կատարելու կը ծառայեցներ : Այսու ամենայնիւ վառվրուն էր և շրջմոլի սիրոյ յիշատակը իսկ դժժնդակ կարողութիւններ ունէր իւր սրտին մէջ :

Տարօրէն հաճոյքներէն մին էր ձիարշաւը : Ամնի նմոյց մը ունէր, որուն կը սեփհականէր իր սրբտին մասը . շատ անգամ կը շօյէր զանի և անոր խխնջելը մեծ զուարճութիւն կազդէր իրեն :

Զմեռնային գեղեցիկ և բարեխառն օր մը օդին պայծառութիւնը նկատելով՝ ուզեց զբօսանքի ելլել և ձի հեծած դէպ ի դաշտը կ'արշաւէր : Քաղաքէն ժամէ մը աւելի հեռանալով՝ անտառի մը մէջ մտաւ : Մէյմ'ալ նայիս բնութիւնը յանկարծ իւր գեղածիծաղ դէմքը փոխեց : Արեւը զոգցես մարդոցմէ խրպնելով՝ ամպի մը ետին անցաւ, որն որ հինգ վարկենէն բոլոր երկինքը սքողեց : Սոսկալի փոթորիկ մը ելաւ : Անտառին ծառերէն մէկուն վրայ կայծակ մը իջաւ որոտընդոստ և զայն թաւալազոր գետին կործանեց : Անձրեւը հեղեղի պէս կը տեղար և քիչ մը ետքը ամէն կողմէ փոքր արուակներ ձեւացան :

Ամնադին ահաբեկ՝ ձին մտրակելով յառաջ անցաւ և մերձակայ Հալիձոր անուն զիւղը գնաց, որըն որ Համանոն գետին մօտ կառուցուած է : Գիւղին մէջ չմտած դարուլարի վրայ շինուած տուն մը գնաց միւսներէ աւելի մօտ ըլլալուն, ճուր պա-

ռաւ և բարեսիրտ կին մը մեծ հիւրասիրութիւն ցոյց տուաւ : Ամնադին ածողի մը վրայ նստաւ և վառուած խարոյկին առջև իւր հանդերձները չորցրնելու կ'աշխատէր :

Նոյն պահուն նազելի օրիորդ մը, որ պառաւ կնկան զուտորը կը սեպուէր, ներս մտաւ : Իւր երեսը չափազանց գեղանի էր, իւր մազերը սեւաւ և հիւսնալի, ընթինները կամարած և էին : Սեւաւ աչերով, անուշ և փոքր բերնով, վարդագոյն այտերով, վեհանձն և շնորհալի քալուածքով : Գիւղական պարզ և մաքուր զգեստ մը կը կրէր : Հագիւ թէ տասնեութր կամ տասնեինը տարեկան հասակը ունէր : Հուսկ ուրեմն ինչպէս որ կ'ըսեն, Թարմ հասակին անմեղ և սքանչելի տիպարն էր անիկայ :

Ամնադին տեսնելուն պէս հեշտ կիրքերու աննըման յոյզ մը զգաց : Երբէք կին մը ասկէ աւելի մեծ սէր չ'էր ներշնչած իրեն, երբէք ատանկ եղական գեղեցկութեան չ'էր պատահած : Նախ երկնային դիցուհի մը կարծեց զանի և քիչ մը ևս անոր ոտից առջին պիտի իյնար երկրպագութիւն ընելու : Ո՛հ անոր քաղցր նշմարը իր հոգիին մէջ կը թափանձէր :

Օրիորդը ականածական ձևով մը ողջունեց զԱմնադին և կերակուր պատրաստելու համար ձգեց իսկոյն խոհանոցը քաշուեցաւ : Իսկ նորեկ հիւրը անկարող էր ալ ոտքի ելլելու, դեռահասակ օրիորդին հիւսնալի ձևը և անոր դիմաց գծազրուծիւնը իւր մտքին մէջ կարծես թէ անջնջելի դրոշմուեցան : Կուրծքին ելեւէջէն իր ծածուկ կիրքերու սաստիկ յոյզը կը յայտնուէր : Ուստի հաստատ միտքը դրաւ կամ համոզելով կարգէ և կամ ամէն խող և խուժ արհամարհելով հափափէ զանի :

Երեքնին մէկէն ճաշելէն յետոյ, Ամնադին սկսաւ օրիորդին հետ, որ Զարուհի կանուանէր, խօսակցիլ : Որչափ կը նկատէր այնչափ իր սէրը կ'աւելնար, ինչպէս փոքր կայծ մը մեծնալով ահագին հրդեհ կը յարուցանէ : Օրիորդն ալ Ամնադինի համար միևնոյն նախազգացումները ունեցաւ, բայց իր և անոր մէջ այն տարբերութիւնը կար որ իւր

սէրը աւելի անմեղ, աւելի սուրբ էր և կը բաղձար իբր կողակից ծառայել անոր, չ'է թէ իբր գործիք:

Ամնադին աղջկան մօրը դառնալով ըսաւ.

— Տիկին, մեծ ընտանիքէ մը կը սեռիմ, ընտանիքի մը հետ երջանիկ կենակցելու չափ և գուցէ աւելի հարստութիւն, ամենուն քովը մեծ յարգ և համակրութիւն ունիմ, մեր տիրոջը Պէլզինէյի խորհրդականն ու աղջկանդ կամբը կատարելու կարող եմ: Ուստի կը պաղատիմ քեզ ասոր հետ ամուսնանալու հաւանութիւն տալու մի վարանիք և հաւաստի եղիր որ դու ալ մինչև իման երջանիկ պիտի ապրիս:

Զարուհի այս խօսքերը ըսելուն կարմրեցաւ: Կը խռովուէր, թէպէտ կ'ուզէր ինքն ալ իւր բաղձանքը յայտնելու, բայց ամօթխածութիւնը լուռ կենալու պարտականութիւն կը դնէր իւր վրան:

Մայրը սկսաւ խորհիլ: Ամնադինի պատուոյն և քիչ շատ հարստութեան համբաւը ականջը հասած էր, սակայն զինքը չէր ճանչնար, վասնորոյ այս առաջարկութիւնը տարօրէն թուեցաւ իրեն և ապագայ երջանկութիւն մը երազելով առանց յապաղելու այս ամուսնութեան համար հաւանութիւն տրուաւ. յարելով թէ՛

— Զարուհին, գուցէ նշմարեցիր, պարզասէր և համեստ աղջիկ մ'է: Իմ հարազատ զաւակս չէ անիկայ: Լսածիս նայելով իւր մայրը իրեն կեանք պարգևած ատեն ինքն ալ յետին շունչ տուած էր: Առ տնին պէտք եղածները իմ քովս գրեթէ քաջ սորվեցաւ: Իմ որդեգիրս է անիկայ, զոր մայրական կամոգին սիրով խնամեցի: Եթէ ինքը կը կամի ազատ է քեզի հետ կարգուելու, իմ հրամանս արդէն տուած եմ:

Ամնադինի երեսին վրայ ուրախութեան ժպիտ մը փայլեցաւ: Գործը կը մնար հիմայ Զարուհին համոզելու:

Զարուհի չ'էր զօրեր ալ զինքը նկատելու: Սարսուռ մը ազդեց իւր սրտին, որով մարմինը նոր կենդանի բռնուած ձուկի մը պէս կը դողդողար: Ճակատագիրը այս խեղճ արարածին մտքին մէջ անգամ խորհուրդներ կը յարուցանէր:

— Փոյթ չէ, կրկնեց անդէն Ամնադին առանց լաւ մը խորհելու, հարազատ ըլլայ կամ ոչ ես զինքը սիրեցի, կը սիրեմ և կը յուսամ որ ինքն ալ միևնոյն զգացմունքը ունի ինձի համար:

Անուս և անփորձ օրիորդը այս խօսքերէն խափուելով ստորասական նշմար մը ըրաւ, նշմար մը որ իւր ապագային կը պարունակէր և թշուառութեան վիճի մը կը բանար իւր առջև...

Ալ Ամնադինի զգացած ուրախութիւնը անկարելի է խօսքով նկարագրել: Կեանքին մէջ ասկէ մեծ յաղթանակ մը չէր տարած և ատանկ մոլի երջանկութիւն մը չ'էր զգացած երբէք: Զարուհիին ձեռքը առաջին անգամ սեղմեց իւր շնորհակալութիւնը յայտնելով:

Սոյն միջոցին օդը բացուած ու իրիկուն եղած էր:

Ամնադին գիշերը Պէլզինէի քով երթալ խոստացած ըլլալուն ստիպուած էր անկէ մեկնելու, սակայն ներքին ձայն մը զոգցես զինքը արգիլել կ'ուզէր, որուն ականայ անհղու կը գտնուէր: Հուսկ ուրեմն իւր նոր սիրուհւոյն և Մարիամին դառնալով՝ ստիպողական գործի մը համար բաժնուիլը ցաւօք սրտի անոնց յայտնեց ու ժամադիր եղաւ երկու օր ետքը վերստին գալ և քանի մը օրէն ալ ամուսնութեան վրայ խօսակցելու: Սրբնծաց նժոյգը հեծնալով հեռանալը մէկ ըրաւ: Իսկ Զարուհի տըրտում և տխուր երիտասարդութեան ու սիրավառ սրտի մը ծագեցուցած մտախոհութեանց մէջ ընկըղմեցաւ...

Գ.

Զմեռնային եղանակի մէջ կը գտնուին:

Գիշեր է:

Հալիձոր գիւղին մօտ՝ զարնանային կանաչագեղ զարդերէ մերկուած դարուվարի մը վրայ անշուք տնակ մը կայ մարդաբնակ, ուր խոր լուծիւն կը տիրէ:

Դուրսը խիտ սևամե ամպեր պատած են : Որոտում, փայլակ, կայծակ փոփոխակի իրենց պաշտօնը ի գործ կը դնեն . . .

Հարաւային հովը դաշտային ծառերու խշրոտոց կը պատճառէ, որնոր ամպերու անընդհատ գոռււթովը անլուր կը մնայ :

Տնակը մեծկակ պատուհան մը ունի, ուսկէ ճըրագին աղօտ լոյսը դուրսը մուծին մէջ կը ցոլայ :

Առանձին սենեակին մէջ երկու կին կը գտնուին : Սիրտմաշուք խորհուրդներով կը տառապին : Ասոնց մէ մին և աւելի երիտասարդը նիհար, այլ շնորհալի դէմք մը ունի, ակնկոր գետին կը նայի : Իւր սեռա աչքերու կրակը ակներև կը ցուցունեն թէ սըրտին մէջ քնքուշ, անկեղծ, բայց տագնապող և չարչրող սէր մը կը կրէ . . .

Գուցէ ընթերցողս կրցաւ մախքերել որ այս աղջիկը մեր վիպասանութեան դիւցազն Ջարուհին է :

Բրդաշէն կրակարանին վրայ քանի մը փայտ կը վառին, որուն առջև նստած են սիրալառ աղջիկը, որնոր չ'ուզեր ըստ սովորութեան աշխատիլ, և Մարիամ որ բամպակ կը մանէ :

Ջարուհիի թաղծութիւնը օր ըստ օրէ կը սաստկանայ և կարի դժնդակ է :

Հալ և մաշ խորհուրդ մը զինքը անհանգիստ կը դնէ, մանկութեան անմեղ օրերը միտքը կուզան և քիչ շատ կը յիշէ որ ծերունի պաշտպան մը ունէր, հօր մը պէս գթասիրտ և իրաւամբ կուզէ գիտնալ թէ՛ որմէ կը սեռի, ինչո՞ւ ասպնջական պառաւ կնկանը խնամակալութեան յանձնուած է և թէ Ամնադինի լծակից ըլլալով իւր վիճակը ինչ պիտի ըլլայ :

Մարիամ շատոնցուրնէ ի վեր իւր որդեգրին ինչ մտատանջութեամբ յափշտակուիլը գրեթէ կ'զգար և սենեկին լուծիւնը վրդովողը ինքը եղաւ նախ :

— Ի՞նչ ունիս, հարցուց օրիորդին, ինչո՞ւ ինձ չես վստահիր, քու հալ և մաշ մտածութիւնդ ինձ չես հաղորդեր : Գիտցիր որ վշտահար մը երբ իրեն համալիշտ չփնտռեր, երբ մելամաղձոտ մը իրեն կարեկից չգտներ, չսփոփուիր, երբ միտքը թագուն խորհուրդով մը անընդհատ կը տառապի, և այդ

աղեկէզ տառապանքը կրողը չ'ուզեր իւր բարեկամին հաղորդել ատիկա, այո՛, այն ատեն է միայն որ մարդկային սիրտը կը վիրաւորի իսպառ :

— Բարի. պատասխանեց Ջարուհի դառն ձայնով մը, որ աւելի հառաչմն էր քան թէ ձայն մը, երբ վշտահարը կուզէ համալիշտ մը և չգտներ, երբ հէք և թշուառ որբ մը կուզէ իւր վիշտերը, մտքի յոյզի և տագնապը իւր միակ սիրելւոյն հաղորդել ու անոր կարեկցութիւնը հայցել, բայց անիկայ անտարբեր կը կենայ, ինչ ընել հարկ է այն ատեն :

— Բայց ըսէ ինձ, քանի անգամ այդ խորհուրդներդ յայտնեցիր և կարեկից չեղայ քեզ :

— Այո՛, ստէպ խնդրեցի քեզմէ, բայց մեղմօրէն ինչ ընտանիքէ սեռելս իմացընես, թէ ինչպէս դու ինձ դայեակ կարգուեցար : Իսկ դու երբեք չզիջար հարցմանս գոհացուցիչ պատասխան մը տալու : Այո՛, իբր դուրսէ՛ դուրս կը լսեմ որ ես հայր մը ունէի, մայր մը ունէի և դու չ'ես յօժարիր լոկ անոնց անուէն տալով՝ զէթ իմ վշտաբեկ սիրտս սփոփելու : Աւա՜ղ, եղկելի հառաչներու բան մը չ'էին ազդեր քեզի . . . : Այո՛ աղէկ խորհեցայ : Այո՛ հիմայ ալ սիրայօդ սիրտ մը գտայ : Այո՛ ժամանակը եկաւ որ վատշուէր կեանքս, միայնութեան մէջ անցնելու դատապարտութեան վերջ պիտի տամ :

Հոս անմեղ Ջարուհին կերպ մը սիգալով անձնապատան կը գտնուէր անխոհեմաբար :

— Ինչո՞ւ այսպէս կը զայրանաս, ինչո՞ւ կը փքաս : Շատ անգամներ չկրկնեցի որ յարմար առիթ մը քեզ ամեն քան պիտի յայտնէի, յարեց Մարիամ մանած բամպակը ի բաց թողլով և անգամ մը աղջկան երեսը նայեցաւ :

— Ապա ուրեմն դարձեալ կ'աղաչեմ մի երկարիր : Ահա յարմար առիթ մը, դեռ կանուխ է, ուստի կրնաս ամեն մանրամասն տեղեկութիւններով ընտանեացս պատմութիւնը և ինչո՞ւ քեզի որդեգրելս ճառել, որպէս զի եթէ ծնողքս դեռ կ'ապրին ամեն խոչընդոտ առաւթուր կոխելով գտնեմ զանոնք : Կրկին կ'աղաչեմ մի՛ յամենար հետաքրքրութիւնս հագեցնելու :

— Շատ աղէկ, պատասխանեց հիւրասէր կինը :

և սկսաւ պատմել : Ասկէ շուրջ տասնեւչորս կամ տասնեւհինգ տարի առաջ հեզ և աշխատող էրիկ մը ունէի , որ Թէպէտ և ծերունի , բայց երիտասարդի մը պէս եռանդոտ էր «մերձակայ վայր մը փոքր ագարակ մը ունէինք , ուր ամեն օր երթալով անդուլ կ'աշխատէր , միւս կողմէն ես ալ հիմակուանէն կրկին աշխատելու կարողութիւն ունենալով երկուքնիս մէկէն կրնայինք պարեն հայթայթել : Աստուած այնպէս կամեցաւ որ զաւակ չծնեմ և ամուլ մնամ , վասնորոյ երիտասարդութենէս ի վեր տղայքը շատ կը սիրէի և անոնցմէ խելօք և շնորհալի մանուկ մը տեսնելուս պէս խենդի նման վրան կը վազէի եւ համբոյրներ տալով կը գրկէի :

Ափսոս , իմ սիրելի ամուսինս , իմ միակ նեցուկըս , որուն յիշատակը անգամ մինչև ցարդ դառն կուգայ ինձ , երկու օր միայն հիւանդութիւն քաշելով մեռաւ ու ես անոք և անօգնական մնացի : Այն ատեն երեք տարի ագարակը անմշակ մնաց , օտարներ եկան և անիրաւութեամբ ագարակին մեծ մասը յափշտակեցին , վասն զի արդարութիւն չկար և Պելզինէ իշխանը դեռ իւր հօրը չէր պայազատած : Սոյն միջոցին հեզ և տառապեալ կեանք մը վարեցի , ըստ որում իմ աշխատութեամբս հազիւ հազ կրնայի չորաբեկ հաց մը ձեռք ձգել : Օր մը միտքս դրի միայնութենէ ալ ձանձրացած քաղաք երթալ և պատուաւոր տան մը մէջ իբր աղախին մտնալ և ծառայել : Արդարեւ զացած օրս բարեկամութիւն մը առաջնորդութեամբ այն տունը մտայ , ուսկէ զքեզ առի և գոր դու հազիւ կը յիշես ստէպ ալ ինձ կրկնեցիր , բայց անցելոյն դառն յիշատակը միտքդ չբերելու և քեզ տրամուծին չպատճառելու համար կը լռէի «Հիմայ որ ամէն բան աչքդ առիւր ալ կը խօսիմ : Հոն՝ այն տունը զծած մարդ մը կը բնակէր և որուն անունը լաւ մը չեմ յիշեր , բայց չէ հիմայ միտքս եկաւ երուանդ , այն երուանդ պիտի ըլլայ :

—Այո , ըսաւ անդէն Զարուհի , փոքր ի շատէ իմ ալ այնպէս միտքս կուգայ Թէ՛ այդ մարդը հիւանդ էր : «Ես այդ մարդասէր հիւանդին հայր կը կոչէի : Ինչ բարի մարդ էր անիկա : Բայց դուրսէն

օր մը լսեցի որ չէ՞ծէ բուն հայրս , այլ հօրեղբայրըս էր : Ո՛հ քանիցս կուզէի գիտնալ այն ատեն իսկ Թէ ո՞վ էի բան մը չէին յայտնէր ինձ : »

—Այսպէս , շարահարեց Մարիամ , խեղճ մարդը կուրծքի հիւանդութեամբ կը չարչրէր : Սակայն իմաստութեամբ այն ծերունին քաջ գիտէր Աստուծոյ կամաց հպատակիլ , Թէպէտ կ'զգար Թէ պիտի մեռնէր և օր մը քեզի բերել տալով վերջին համբոյր մը տուաւ արտասուելով և դուրս հանել հրամայեց յետոյ զիս ալ քովը կանչեց . «Մարիամ , ըսաւ այսօր յետին շունչ տալիքս կըզգամ ու Թէպէտեւ մահուանէ չեմ վախեր , բայց միայն կը ցաւիմ այդ անոք որբին վրայ , վասն զի երեսի վրայ պիտի մնայ : Անոր հայրը , Վահէ՛ որ իմ ալ եղբայրս էր այս անտերունջ որբին ծնելէն զրեթէ եօթը ամիս առաջ մեռաւ , մայրը —Ա՛հ , տրտմալի պարագաներ , որ մարդկային սիրտը կը ճմլեն նաև՝ ի խոր խոցելով այն որդեսէր մայրը իւր այս առջինեկ զակին կեանք տուած օրը ինքն ալ իւր հոգին աւանդեց » :

Զարուհի իւր աշխարհ եկած ատեն մօրն ալ մեռնելը իմացած էր , բայց այժմ ճշգրիտ հաստատուն կրկնութիւնը լսելուն՝ որդիական փափուկ զգացումները յուզեցան և արտասուալից աչերով խարոյկին հանած բոցը կը դիտէր :

—Այո կըսէր անիկա , կրկնեց Մարիամ , այդ դժբաղդ մանուկը անոք և անօգնական պիտի մնայ , վասնորոյ յետին կեանք մը ունիւմ և դու որ վեց ամիս հիւանդութեանս մէջ ինձ հոգ տարիր , դու որու բարի հանգամանքը կըցայ լաւ մը ճանչնալ , կը յուսամ որ չպիտի զլանաս զայն կատարելու :

«Ո՛չ կը գոչէի այն ատեն և արտասուքի կաթիլներ դժգոյն այտերս կը Թռչէին պէտքը չէ որ այդպէս յուսաբեկ վիատիս : Քիչ ատենէն պիտի բժշկուիս ապրիս , ես ալ քեզի հաւատարիմ պիտի ծառայեմ վերստին » :

«Քու ձիրքերուդ լաւ մը վերահասու եղած , ըսաւ ծերունին և իւր մահաբոյր դէմքը երթալով սոսկում կը պատճառէր ինձ , ուստի կուզեմ որ ատոր մայրը ըլլաս և մայրական կաթնոգին սիրով

խնամես զանի: Դիտեմ որ ապրուստի կողմանէ ներդրեալն պիտի կրէք: Առ այդ մեծ բաւկը, որն որ տասը հազար թանկ կը պարունակէ, այդ գումարը, զիւղի մը մէջ խնայողութեամբ ապրելու որ ըլլաք մինչև ի մահ կրնայ բաւել, կուզէի ատկէ աւելի տալ, բայց վիճակս չներեր. Մինչև որ Զարուհի մեծնալով համեստ կին մը ըլլալը և պարկեշտ ու արժանի ամուսին մը գտնելը, ինձ նկարագրած զիւղական տնակիդ մէջ ի միասին գնահատելու հանգիստ, սակայն ամէն բանէ առաջ այդ թշուառ որբին առտնին պէտք եղածները սորվեցուր և ջանադիր եղիր որ համեստ աղջիկ մը ըլլայ և ասանկով գէթ իւր մօրը առաքինութեան անմահ տիպարը կրէ:»

Շարունակելի

25 Մայիս 1868.

Մեծարդոյ Խմբագիր Էրիզայի.

Հաճեցէք ներկայս Ձեր յառաջիկայ Էրիզայի միջոցաւ հրատարակել:

Թաղիս վարժարանի ուսուցիչներէն մէկուն իբրեւ շնաբարոյ ամբաստանող Պ. Աշոտը, ով որ է, կը հրաւիրեմք զինքը, որ թուականէս մինչև 15 տասն եւ հինգ օր Թաղական Խորհրդոյս առջև օրինաւորապէս հաստատէ իւր ամբաստանութիւնը, որ ուսուցիչին համար եւ ինչ պարագաներով ըլլալը:



Թաղական Խորհրդոյ

Փ. Ասենադպիր

Փ. Ասենապէս

Յ. Ս. ՄԱՋԼԵՄԵԱՆ

Յ. ՎԱՐԿԱՆԵԱՆ

ի Խորհրդարան

Սամաթիոյ Ս. Գ. Եկեղեցւոյ.

Այս նամակը հրատարակելէ զկնի, կիմացընեմք նաև Սամաթիոյ Ս. Գ. Եկեղեցւոյ Թաղական Աղաներուն որ, Պ. Աշոտը ուրիշ նամակ մը ևս մեզ ուղղած է, և որուն մէջ կարծեմ պիտի յայտնուի այս շնաբարոյ ուսուցիչին ով ըլլալը. սակայն այսօր մեր

էջերուն սղութեանը պատճառաւ, հետեւեալ թուով պիտի հրատարակենք:

ԱՆՁՆՈՒԻՐԱԿԱՆ ԶՈՂՈՂՈՒԹԻՒՆ

Կարծեմ ընթերցաւք հասարակութիւնը. կամ լաւ ևս է ըսել, մեր Արգոյ բաժանորդները. քաջ կը յիշեն Էրիզայիս ութերորդ թուոյն մէջ ըրած մեր ութը տող ազոյր, զորս կը խոստանայինք ծանուցանել թէ. «բնական աշխարհիս մէջ առանց պատճառի բան մը չըլլար, անշուշտ մեր այս թերթը ուշացնելուս դանդաղութիւնն ալ պատճառ մը կամ արգելք մը ունենալու է:»

Ազնիւ Հայեր, Հայ գրականական ասպարէզ իջնելնէս ի վեր՝ ցաւ լի սրտի կը լսեմք որ տեսակ տեսակ երևելի և խիստ շատ ալ աներևոյթ թշնամիներ մեր հետ գաղտագողի ասպարէզ կիչնեն. ամեն տեղ մեր անունը արատաւորելու համար, այլ և այլ փտուն զուխներով և պառաւական փաստերով մեր գրչի առաջ գիշեր և ցերեկ նախատական հարուածներ կիջեցնեն. և զմեզ անուանարկելով աննշմարելի դարաններ կը լարեն. մեր ասոնց ամենքը իմացանք, լսեցինք ու պարզ նշմարեցինք. բայց Մաղկի Խմբագրին առ մեզ ուղղեալ նամակին յետեւեալ մէկ քանի տողերը յիշելով կը մխիթարուէինք թէ. «գրական ասպարէզը խիստ տաժանելի է. այս ընդարձակ դաշտին մէջ արիաբար կուրիւր արիութիւն կենդանորէ» և անիրաւութեան դէմ արդարութեան դրօշը կանգնելն ալ անձնուիրութիւն կը պահանջէ:»

Ժամանակակից Հայը քաջ կը ճանչնայ ներկայ լուսաւորեալ դարու քաղաքականութիւնը. ընկերային աշխարհի հաւասարութիւնը. թէ մեծ ըլլայ թէ պզտիկ. ամէն մարդ իւր կարծեացն ու համոզմանը վրայ ազատ ըլլալ պէտք է. բայց ինչ օգուտ. մեր ազգը դեռ ևս այս գաղափարին տէր ըլլալու համար քանի մը դարերու ևս կը կարօտի եթէ՝ ըսելու ըլլամք ամենեւին չեմք վրիպիր, ինչպէս որ մեր ողորմելի ազգին մէջ ժամանակ մը, քառասիրութեան. կամապաշտութեան և միապե-

տուժեան չար ոգին կը տիրէր . եթէ հիմա ալ դիկտատորութեան աղօտ ոգի մը կը տիրէ ըսելու ըլլանք կարծեմ չը պիտի սխալիմք . որովհետեւ . ողջամիտ անձ մը այս կետը բացատրելու կարող ըլլալով և ոչ անգամ . մեր բացադրութեան չը կարօտիր :

Մեր մեր խմբագրական պարտաւորութիւնը կատարելու զբաղած ատեննիս . Փանոսեանի ծնամիները մեզ Փանոսեանի արբանեակներէն մէկը կարծեցին , սակայն այս կարծիքը ընելու ատեննին կանուխ մոռցան Խմբագրի մը առ ազգն ունեցած պարտաւորութիւնը յիշելու թէ՛ Խմբագրի մը գրիչը միշտ դէպի արդարութեան շաւղին հետեւելով . ճշմարտութիւն իրաւունք և սկզբունք բարոյեւ է . և ոչ թէ շողմարարութեամբ ժողովրդեան արդար համոզմանը հակառակելու փորձեր ընելու ելնելէ , վասն զի մեր ոչ Փանոսեանի Հայրենակիցը էինք . և ոչ ալ անոր ազգակիցը , արդարութիւնը արբանեակի և պաշտպանի չը կարօտիր , Փանոսեանի անձնուիրական զոհողութիւնները ամէն ողջամիտ Հայերու սրտին մէջ անմահ յիշատակ մը կը կրէ . մեր Փանոսեանի համար զրածները արդէն աշխարհի առաջ ակներև կը փայլին . եթէ ունիմ յանիրաւի գրութիւն մը՝ պատրաստ եմ ինքզինքս մինչ ի մահ դատապարտել . իսկ եթէ՝ իրաւունք և արդար , համոզումներ էին մեր կարծիքները . այս անգամ Էրիզայի զաղարման շարժառիթըն ըլլալը . յիրաւի ինձ համար բարձրաստիճան պատիւ մընէ , սիրով կը փափաքիմ ես համբուրել այսօր ինձ վրայ ծանրացեալ այն ձեռքը որ թշնամի և մոլորեցուցիչ զօրութեամբը , որչափ որ կուգեր մեզ անուանարկել . ահաւասիկ այնչափ ալ այս վայրկեանիս կը կրկնապատկի մեր պատիւը , փառք կը պսակուի մեր զլուխը դաինի ծաղիկներով ոչ թէ փծամիտ՝ այլ ողջամիտ հասարակութենէն :

Ուրեմն թող ուրախանան և զմայլին Թերզեանի բարեկամները երբ կը տեսնեն մեր այս փառապըսակ զոհողութիւնը . թող չխնտայ ինչ զմայլի Թերզեանի այն թշնամին . որ Էրիզայի ի տես ելած օրէն ինչուան այս վայրկեանիս մեզ կը վատա-

բաներ տեսակ տեսակ անարգանքներով օտարին առաջ . և ոչ առ երեսս մեզի հետ . Փանոսեանի ըսածին նման . «անձնուիրութիւնը զոհողութիւն կը պահանջէ» . ուստի թող իմ ալ արդարախօսութեան զոհը իմ Հանդիսիս առանց փաստի մը գոցուիրն ըլլայ , Փանոսեանի նման իմին ալ հրամանի հնազանդիլ պարտքս է .՝ սակայն և այնպէս զգացումս ալ չը լռելով արտասանել , մինչև իմահ իրաւունքս է : Չեմ վարանիր կրկնելու խօսքս թէ՛ թող չը ցաւին բարեկամներս . և չուրախանան հակառակորդներս վասն զի լրագիր խափանելու շարժառիթ ըլլալը անիրաւութիւնը իբր ճշմարտութիւն փաստաբանել չէ . նուաստ անձի մը դէմ թշնամանելը . բարձրաստան անձի մը համար կարծեմ պատուոյ արժանի խոհեմութիւն մը չէ . բարձրաստիճան անձի մը իմ վրայ տարած այս յաղթութիւնը . իմ փառքս ու անոր անուան նկարագրական արատն է . այսօրուան թշնամույս ինձ հրամանաւ մը յաղթելը իրեն նուաստ կերպով յաղթուիլը կենթադրէ . քանզի այսպիսի ստորին յաղթութիւն մը , երբ արդարութեան և փաստի վրայ հիմնուած չէ՝ համարձակաբար կը գոչեմ որ գաղտագողի թշնամույ մը համար . խնդալու և զմայլելու յաղթութիւն մը չէ՝ եթէ ոչ՝ իրեն ինչ անարիւն մարդ լինելը բացարձակ ի հրապարակ հանել է :

Ինչ և է երկարօրէն նկարագրութիւններ ընել պէտք չէ , վասն զի ինչպէս որ վերը յիշեցինք հրամանի հնազանդիլ խոհեմական պարտքս է , ուրեմն պէտք է որ հրամանատարիս հրամանին սիրով հրնազանդիմ , բայց անուան հասարակութեան առաջ անարատ պահելու համար ալ քանի մը խօսք արտասանեմ :

Ազնիւ բաժանորդք ,

Այսօր ցաւ ի սրտի կիմացնեմ ներկայ Թերթոմի որ գործերուս աններողութեանը , ժամանակիս սրդութեանը , նաևս այլ և այլ պատճառներով կշտտիպուինք Ձերդ ազգասիրութեան իմացնել որ այստեհետև այլ ևս չպիտի կարողանամք Էրիզա հանդիսիս Խմբագրական պաշտօնը ի զլուխ հանել . ուստի որոշեցինք զաղբեցնել հրատարակութիւնը ,

սակայն տեսնելով որ Մանգուռե օրամերթին խափանումը Արգոյ հասարակութեան զայրոյթ մը պատճառեց, և այս ընթացքով Պատրիարքարանը փոխանակ ժողովրդեան համարումը գրաւելու ու հասարակութեան սիրոյ համակրութեանն արժանանալու, աւելի ևս իւր անուան պատիւն ու ժողովրդեան համակրութիւնը կորսնցուց, մեր ևս Էրիզայի դադարմամբ աւելի ևս. այսինքն հասարակութեան սիրտը լափիլիզող բոցոյն վրայ կրկին իւղ չեցընելու և Պատրիարքարանի անուան արատ մը չբերելու ու ժողովուրդին համարումը Պատրիարքարանէն չպաղեցնելու՝ նա մանաւանդ Արգոյ բաժանորդաց շատերէն տարեկան բաժանորդագինը առնելու, Ազգային խմբագրաց անուան արատ մը չբերելու մտօք՝ այս անգամ հարկադրեցանք մեր խմբագրական և տնօրինական պաշտօնը բոլորովին յանձնել մերս բարեկամ Արգոյ Պ. Խոսրով Բագարատեանի՝ զորս քաջայոյս եմք որ, յիշեալ անձն ալ իւր խմբագրական առաջին պարտքը Հասարակութեան օգտին ծառայել ըլլալը և մեծամեծ անուններու տակ շողմարարութիւններ ընել պէտք չըլլալը զիտնալով՝ աւելի ևս պիտի կարենայ Արգոյ ընթերցասիրաց սիրոյն ու համակրութեանը արժանանալով՝ մեծամեծ օգուտներ ևս ծառայել Ազգին:

Ուստի Ազնիւ Ազգայինք. ինչպէս որ ազգասիրաբար կանուխ վայրկեանի մը մէջ, հայրենասիրական եռանդով մը լեցուած օր քան զօր բաժանորդագրական ձեռնտուութիւննիդ չզլանալով 300 ի չափ ցանկ մը կը կազմէիք Էրիզայիս. կրկին անգամ վստահ եմ որ մեր նուաստ անունը ծշնամեաց առաջ փառաւորուելու մասին երբէք չպիտի զլանայք մեր Արգոյ բարեկամ Խոսրով Բագարատեանի խմբագրական և տնօրինական ձեռնարկութիւնը և անոր աշխատասիրական եռանդը բաժանորդագրութեամբ բազմապատկելու, որ հայրենավառ սրտի մը առաջին պարտաւորութիւնն է:

Ազնիւ բաժանորդք, այս վերջին անգամն ալ այսպիսի երկտողով մը Ձեզ հետ խօսելէս զինի, վերջին հրաժեշտս ալ չեմ մոռնար Ձեզ նուիրելու. ամէն մարդ իւր Ազգին ծառայութիւն մը ընել պէտք

է. ահաւասիկ մեր ծառայութիւնն ալ այսչափ եղաւ. իմ խմբագրական պաշտօնս միայն... Թըշնամին կրցաւ ձեռքէս յափշտակել, սակայն սիրտս դեռ ևս ողջ է, այսուհետեւ օտարագոր լրագրաց էջերը ինձ համար պատրաստ են, ըսել կուգեմ թէ կրկին սիրտս և գրիչս օտարագոր լրագրաց միջոցաւ, կարող է խօսիլ այնպիսի անձանց հետ՝ որոնք ոչ թէ խոհեմութիւնը յարգել չանացին՝ այլ միշտ անձնական կիրք մը բանեցնելով մեր գրչի ազատութիւնը խղդել կարողացան. արդարութիւնը անիրաւութեան դէմ բանի մը նահատակներ ունեցեր է, թող ներկայ դարոյս մէջ ալ թէրգեանը ծշնամական և բռնաբարական շղթաներու առաջ կաշկանկան և անշուշտ կուգայ վայրկեան մը ուր արդարութիւնը՝ անիրաւութեան դէմ յաղթական կը կանգնի:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ն Ե Ռ Ն

ԿԱՄ

ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԻ

Ի Մ. Յ. ՀԻՍԱՐԵԱՆԷ

Այս վերնագրով Արամեան մաքուր տպագրութեամբ ի լոյս ընծայեալ սքանչելի հեղինակութիւն մ'է, և որուն պատմական նկարագրութիւնները հետաքրքրական ըլլալուն, քաջայոյս եմք որ Ազգայինք ալ յիշեալ Արգոյ հեղինակին այս աշխատասիրութիւնն փառօք պսակելով, ուրիշ այլ և այլ հեղինակութիւններ և թարգմանութիւններ ևս Հայ գրականական ցանկին մէջ բազմացնելու պատճառ պիտի ըլլան:

Կը ծախուի միայն ի գրատան Փարիզու Շէրիֆ Փաշա խան Թիւ 13. Գին 6 Ֆրանք:

Խմբագիր-ՏՆՕՐԵԱՅ

ԽԱՉԻԿ Թ. ԹԷՐԶԵԱՆ
Առաջին անգ. բժշկական դպրոցի

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

Կ. պոլիս, Ուզուն Զարը Շէրիֆ փաշա խան, քիւ 13